

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Հարաստգուած զանցը՝ Հառապամանի. — Հիւսիսի միաբը. — Ա՞հ է ուզում
ասել Հառապաման իր պիեսալով. — Հառապաման և Նիցշէ. — Տնածառ,
Նեմիրավիչ-Դանչենկոս և սէ մի բոյէ Հառապաման չանեմն Մեռանիցիոս. —
Տրիլիի Կէի. — Հրեական ոզդի օգին. — Յառարներն Պատապենկոփ. — Ախ-
թապաշտական, գործնական օգին մեր պատում և Վերն Խամանակում. —
Արիիէլ Ակաստան Դացկավի. — Յանկլոս Եկատոպիր և Հայ բեմը. — Գ. Կարա-
Մուրզալի կոնցերտը.

Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերութեան խմբի
ներկայացումները շարունակուում են և, բարերազդարար կարելի
է ասել, յաջողութեամբ ծչմարքա է, թատրոնը միշտ բազմա-
մարդ չէ լինուում և բնականապէս մուտքը չէ գոհացնուում, եր-
բեմն այս կամ այն պիեսայի ընտրութեան դէմ արդարացի
արտունչներ են լուսում, բայց այդ բոլորը զործի զուցէ սկրզ-
նաւորութեան հետ կազուած անպատճենթիմներ են, որոն-
ցից, երեւի, ժամանակը մնաց կ'ազատի Ասում են, որ երր տա-
րիներ առաջ առաջին անգամ լուր տարածուեց թէ Հայ լիզուով
Համբէտ են խաղալու, լուղ օտարները երեւոյթի անսպառու-
թեան հանդէպ զարմացած՝ հեղուութեամբ նկատուում էին, և ևսենք
թէ բոլորը հնարաւոր եղաւ, բայց Հայերէն բնչպէս կարելի է
արտասանել Համբէտի փիլիսոփայական անվճռողականութիւնը
ընորոշող յայանի փրազան Եկա. Աղամեան, խազաց Համբէտ և
ի մեծ զարմանս ամենը հայերէն քաղցրանչիւն կերպով ար-
տասանեց՝ «Լինել, թէ չը լինել», Տաղմանդի և հասարակութեան
զիտակցական վերաբերմունքի առաջ իլլիւզիաները հեշտութեամբ
իրականութիւն են զառնուում և անյաղթելի համարուած դժուա-
րութիւնները կամաց-կամաց անհետանուում Աղամեան չունենք,
բայց չնորհալի զերասաններ կան, ընդունակ շարունակելու
բնմական զործը, եթէ ոչ Աղամեանի փայլով, զէթ պատուա-
ւոր կերպով Անցնենք փաստերին:

Անցեալ հոկտեմբերի 25-ին խումբը ներկայացրեց Հառապտմանի «Խորասուզուած զանգը» Այդ պիեսան արտաքուստ յիշեցնում է այն գրաւիչ հեքիաթները, որոնք օօրել են մարդկային իւրաքանչիւր սերնդի գերբնականի սիրահար մանկութիւնը, որոնք ծնունդ լինելով հազիւ թոթովով մարդկութեան մանուկ երեւակայութեան բնականապէս գրաւիչ են երեխաների համար, Խորասուզուած զանգը հեքիաթի պէս արտաքուստ չափաղանց գրաւիչ է ներկայացրած բնութեան գեղեցիկ տեսարաններով, ֆանտաստիկ պատկերներով, նաև գերբնական անակնաշներով: Եւ այդ բոլորը ըստ երեւոյթին թւում է այնպէս հասկանալի, այնպէս պարզ, այդ ողիները, այդ ֆէաները, որոնք գնում, զալիս են, կայտում և երգում, վշտանում և ուշրախանում իսկ և իսկ մարդկանց պէս Բայց հարցը գրանով չի վերջանում:

Հեքիաթները, բնութիւնը, լենները ու անտառները, լճերն ու գետերը խօսեցնող, կենդանացնող այլաբանութիւնները միշտ երկու պատկեր ունեն՝ մէկ արտաքինը, որ այնպէս հասկանալի է թւում անգամ մանուկներին, և միւսը՝ ներքինը, որ պարունակում է շատ անգամ՝ կեանքի խորին փիլիսոփայութիւնը և մտածել է տալիս յարուցած բարդ խնդիրների վրայ: Հառապտմանի պիեսան այդ երկու պատկեր ունեցող այլաբանութիւններից մէկն է, հասկանալի և գրաւիչ արտաքուստ, խոտիմաստ և փիլիսոփայօրէն խորհրդաւոր ու դժուարըմբոնելի ներքուստ: Զարմանալի չէ, որ այդ պիեսայի ներկայացումից յետոյ, ամեն անգամ, և կարծեմ ամեն տեղ, մի փոքր մտածող մարդիկ գուրս են գնում թատրոնից միշտ բազմաթիւ «ինչեր» և «ինչուներ» շրթունքներին և մտազբաղ:

Պէտք է ասել նաև, որ Հառապտմանի այս յայտնի գործը դժուարհասկանալի է ոչ միայն այն պատճառով, որ ալեգուրիա է. և բնականաբար ըմբռնելի զառնալու համար որոշ մտաւոր աշխատանք, ուշադրութիւն և քննադատական կարողութեան լարումն է պահանջում, այլ և նրա համար՝ որ այդ այլաբանական գործը գերմանական ազգի ծանր, մառախլապատհանձարի արտադրութիւն է: Առհասարակ հիւսիսային միաքը որքան առողջ է, ասես սանսամանիջների մէջ կարծրացած ու հաստատուն, բայց և զրա հետ միաժամանակ նա սովորաբար մշուշապատ է: Հարաւի այն գրաւիչ, կենսաթոթիւ, մի քիչ թեթեւ (frivole) ժպիտը, մտքի այն անօրինակ պարզութիւնը, գարձուածքների այն գեղարուեստական բացութեան հասնող

զարարում ունը ծանօթ չէ ցուրտ երկրներում, ուր բնութիւնը
ինքնէ մայզի, մթութեան ու խորհրդաւորութեան մայզը:

Հիւսիսում հաշոպէս առնե բան, նոյնապէս և միուր առնե
մշտապէս պրզուում է մի խորհրդաւոր ծածկոցով, ուս նոննէ է
հիւսիսային երկրների շամանդազի մէջ լոզացող լիոներին ու
բաւրներին, որոնք հնառից նայողի համար հազար ու մի ձև
նե ընդունում, զարարում, երկարանում, բացում, երկին
կծկում են և անտառային ֆէնների պէս հնչուութեամբ չեն ներ-
կայանում իրանց խկական պատերուով, Գերմանական մթուր,
որպէս հիւսիսային մթուր, առանձնապէս պրանար և խորհրդա-
ւորութեան և հնչառութեամբ հականէս է զէպի այլարտնու-
թինները, զէպի մութ, զժուարըմբնենիի, շատ անզամ զիրքնա-
կան էլէմենտների լեզուու Եւ այս յատկութիւնը, որ արտապայ-
ում է մաքի ստեղծագործութեան համարեա բոլոր արդինք-
ների վրայ, առանձնապէս շեշտում է զերմանական փիլիսո-
փայութեան և դեղարուեսափ մէջ, Դեռ Գեօթէն իր Ֆառաւուզ,
մարգիային երկու սեների հոգու մէջ վառուող, յարաւեւ աննչը,
արուի և էզի յափանական երգը զրեց մի պանչէլի այլարտ-
նութեան մէջ, պարուրեց հիւսիսի խորհրդաւոր միուշով, կան-
արն իր փիլիսոփայութեամբ մարգիային մաքի տառ մի մոայլ
անդունդ բացեց, հիւսիսային լիոների մի անդունդ, ուր նայեին
անզամ զիսի պատյտ է առաջ թերում, այն աստիճան խորհրդա-
ւոր է, այն աստիճան դժուար վերծանելի այն՝ ինչ կատարուում
է, ինչ ծածկուում է այն սեւ վեհի մէջ, Հեզելը Կանափ բաց ա-
րած այդ մութ անդունզների վրայ նաև սեւ ամսպեր կուտա-
կեց, այսպէս որ ճանապարհորդն լիոնալին վերջին արանեան էլ
կորցրեց, Եւ այսպէս ուրիշ շատերը:

Այժմ, որպէս նմուշ, մեր առջեւ դրուած է Հառուպմանի
Ժորասուզուած զանզը», մի զուտ զերմանական գործ, հիւսի-
սի թաւ, ու կուսական անտառների, խորունկ ձորերի, բարձ-
րաբերձ լիոների մէջ ապրած ժողովրդի մաքի ստեղծագործու-
թիւն Անշուշ զերմանական հասարակ ժողովուրդը տակաւին
մոացած չէ տևառների շարայքած ֆանտաստիկ հեքիաթները,
զեւ ձմեռային երկար զիշերները, երբ զրում կատաղի բայու-
թափի տակ հեծում են ձիւնապատ եղենիները, զերմանացի
մանուկները կրակի առաջ նստած՝ ծեր տատերի շրմունքներից
հետարքրութեամբ ու ախորժելի երկիւղով լուսմ են անտա-
ռային իէաների, սպիների, ջրի պապերի մասին Գուցէ և
Հառուպմանի մանկութիւնը այդ հեքիաթներուի, այդ ֆանտա-
ստիկ պատկերներով մնուած է և զուցէ հնց զրանցից ել նա
հիւսել է իր «Ժորասուզուած զանզը» այլարտնորէն, զնելով

Նրա մէջ գերմանական հանձարին յատուկ ծանրութեամբ լուրջ ու գժուարը մբռնելի մտքեր, հասարակական դաղափարներ:

Նախ քան բացատրենք, թէ ինչ է թագնուած այս գեղեցիկ ալեկորդիայի տակ, թէ ինչ է ուզում ասել Հառապտման իր ողիների, իր ֆէաների բերանով, փորձենք ներկայացնել այդ պիեսայի նիւթը, նրան իրրեւ սիւժետ ծառայող փոքրիկ լեզենդան:

Դէպքը կատարւում է հիւսիսային գերմանական մի լեռնային զիւղում, մի բողոքական բարեպաշտ զիւղում, ուր կրօնը և հին անդրբրիստոնէական հաւատալիքներն ու նախապաշարը մունքները տակաւին իշխող են, ուր մարդիկ հաւատում են այն բուլորին ինչով մանուկ միտքը բնակեցնում է բնութիւնը: Փիւղական հասկացողութիւնների բարձր ներկայացուցիչներն են այստեղ պաստօրը, ուսուցիչը և սափրիչը, երեքն էլ չնորհիւ իրանց պարապմունքի ազգեցութիւն ունեն գիւղում և իրանց զաղափարներով, այսպէս ասած, մարմնացնում են գիւղական խիղճն ու միտքը: Գլխաւոր հերոսն է վարպետ Հէնրիխ, որ համայնքի յանձնարարութեամբ ձեռնարկում է մի զանդ ձուլել լերան կատարին ցցուած մի եկեղեցու համար: Վարպետը հզօր է և հմուտ, նա աշխատում է լեռներում և նրա մուրձերի ձայնից շրջակայքն է դղբրդում: Գործն ընթանում է յաջող և արագ, վերջին օրն է, գիւղոյիք խմբերով գնում են դէպի վեր, դէպի եկեղեցին նոր զանգը աշտարակի վրայ բարձրացնելու: Բայց այդ չի յաջողում, լեռնային չար ոգիները դժգոհ են, նրանցից մէկը կարողանում է լերան կատարից վար գլորել զանգը տանող սայլը: Վարպետը ջախճախուած՝ ընկնում է մի անդունքի մէջ, ուր ապրում է մի վհուկ, պառաւ վիտարխէն, իսկ նրա ձեռագործը, այն որ պիտի հնէէր լեռներում «հրեշտակների աղօթքը», «երջանկութեան միսիթարութեան օրհներգը», այդ հրաշալի զանգը ժայոփից ժայո թաւալսւելով զօղանջելով ու հառաչանքով ընկնում է վար և խորասուգում լեռնային լճակի մէջ: Զարդուած ու վիրաւոր Հէնրիխին տեսնում է անտառային ֆէա՛՛ Բառուանդլէյն, սփոփում և ինսամում է նրան լեռների միայնութեան մէջ և սիրում է նրան բուն սիրով: Պաստօրը ուսուցիչն ու սափրիչը գալիս, գտնում են չկիսամեռ վարպետին այն խոր ձորում, պատարակով տանում են իր տունը և կնոջը Մարգարին յանձնում: Հէնրիխը ծանր հիւանդ է, նա միունում է, բայց անտառային ֆէան բառանդլէյնը նրան չի մոռացնել, նա յայտնուում է աղախնի կերպարանքով և իր հմաքուլ նրան վերակենդանացնում: Այստեղից սկսում է ողիեստիք երկրորդ մասը:

ՀՀնրիխը թազնում է իր սովոր, իր կնոջն ու երես զաւակներին, զնում է լեռները, աւելի բարձր՝ շան երբեքց եղելէր, այսանդ, ուր տարրում է Շառաւանդընը, այն բարի սղին և թնաւորուած նրա երկնային սիրով, նա ձեռնարկում է ձևութիւ մի նոր զանգ, որպէսն առաջինը, որ խորասուզուց լիի մէջ, ձևորերի համար էր և ոչ լեռների թազաւորութեանու նոր զանգի մասին, ՀՀնրիխու տառմ է՝ զին երբէք իմ միաբար այցպիսի ստեղծագործութիւն չէ ննի, նրա ձայնը կը լինի լաւագոյն մնապի, նա ինքնիրան ննչում, զօղանջում ու երգում է, բաւական է միայն, որ ևս ձեռք զիսցնեմ, այ այսպէս և խնդրյանում եմ ձայններ, աչքերս եմ փակում և վայրկենապէս ձև ձեր յետից ձնուում են պարզ կերպով... Աշնանդ, զիրք լեռներում ես կամննում եմ նոր հիմքեր ձգել, և նրանց վրայ բարձրացնել նոր տաճարու

Նրջակայքում լուր է տարածում, որ յայտնի, պարեկոչա վարպետը իր կնոջն ու զաւակներին ուրանալով՝ լեռնային սղիներին բաժին է դարձել, պատրաստում է մի ինչոր հրէշտոր բան, մի կախարդական գործ: Պատօրը յուզուած զալիս զըտնում է նրան դարձի բերելու այդ կորուտարեր ճանապարհց, Զանքերն անօդուած են անցնում, նա զայրացած սպասնում է վարպետին երկրային նետերով և հեռանում: ՀՀնրիխը շարունակում է իր դիւթական գործը լեռնային սղիները կատազած են նրա գէմ, որոնհնուն նրանց հանգիստը խռովուած է, զիւզում ու շրջակայքում, ամեննքը մոմուում ու սպասնում են, ուրովինեան նա կատարում է մի բան, որ վեր է ամեննքի հասկացողութիւնից, որի խորհրդաւորութիւնը մնչում, սարսափեցնում է: Զինուած ամբոխը զալիս է խորտակելու նրա լուսային դիւթական գործանոցը և փշելու որա զանգը, զալիս են հեռուից նաև իր երկու երեխաները, որոնք բերում են մի փոքրիկ կծի մէջ իրանց մեռած մօր արցունքը, միաժամանակ լիի յատակում ընկած զանգը զօղանջում է թափով, ահազին, սասանեցուցիչ թափով: Ֆէայի հմաքը չի օգնում, նրա սէրը չի փրկում ՀՀնրիխին, և նա ընկճուում է ու թազնում զնում: Նա կրկին յայտնուում է լեռներում, փորձում է բարձրանալ այսուեզ, ուր ինքն առաջ աշխատում էր վսեմ, զազափարական գործի համար, և ուր այժմ իշխում է հրդեհն ու աւերածը:

«Ես պիտի բարձրանամ, ասում է նա Վիտորիսինին, այն շէնքը, որ բոցերի մէջ է այժմ, իմն է, իմ ստեղծագործութիւնն է, հասկանում ես, և շինեցի այն, և բոլորն ինչ կար իմ հոգում, ու բոլորը, բոլորը, ինչ որ էի, ևս նրա մէջ զրեցի... և չեմ կարող... էլ չեմ կարող»: Թեւերը ջարդուած արծուի պէս

այժմ նա ընկած է իր աւերուած բնից ներքեւ՝ անկարող վեր սլանալու, ուստի նա նստում է քարի վրայ խորտակուած ու յուսահաաւ Այն ժամանակ, որպէս գիրազոյն փորձ Վիտորիսէնը նրան տալիս է երեք դիւթական բաժակ, մէկը՝ սպիտակ, մէկը՝ կարմիր և երրորդը՝ դեղին զինիով լցրած։ Առաջին երկուսը խմելով Հէնրիխը կարող է նորէն տեսնել իր պաշտպան փէան վերստանալ իր նախկին ոյժն ու զօրութիւնը, բայց ճակատագրապէս նա ստիպուած կը լինի խմել նաև երրորդ բաժակը։ Հէնրիխը խմում է երեքն էլ և մեռնում իր նախկին սիրունու, Բառւտենովէնի գրկում, մրմնչալով՝ «Մեռաւ խաւարը! Մագում է արեր... Արեր, գիշերը երկար է»։

Ի՞նչ է ուզում ասել Հառապտման իր այս այլարանական սիէսայով, ինչ է նշանակում վարպետ Հենրիխի առաջին և ինչ երկրորդ զանգը և ինչու վարպետի այս տիսուր վախճանը։ Այս հարցերին զանազան մարդիկ պատասխանել են տարրեր և զանակով, հեռու լինելով այստեղ լաւագոյն բացատրութիւնը տալու յաւակնութիւնից, կարծում ենք սակայն, որ ճշմարտութիւնից շատ հեռու չենք լինի, եթէ ասենք, որ Հառապտման իր պատութեան վեմ տրագեգիան երկրաւոր ստեղծուած, նիւթով այս ցեխէ զանգուածին կպած, որի անունն է աշխարհ, մարդն իր հագով յաւիտենականապէս դէպի երկինք, դէպի այսպէս ասած աստուածութիւն ձգող մարդու բուռն ջանքերի և նրա պարաւութեան վեմ տրագեգիան երկրաւոր ստեղծուած, նիւթով այս ցեխէ զանգուածին կպած, որի անունն է աշխարհ, մարդն իր հագով յաւիտենականապէս դէպի երկինք, դէպի գերագոյն երազներ, դէպի անհունի խորհուրդն է սաւառնում, այստեղ երջանկութիւնների երջանկութիւնը գտնելու համար։

Հառապտմանի դրաման, տիեզերական այդ մեծ ու անվախճան տրագեգիայի մի գործողութիւնն է, կատարուած մարդկութեան պատմութեան, Էվլիւցիայի անսահման ընթացքի մի մօմնուում։ Եւ հէնց դրանում պէտք է վնասուել այդ պիեսայի ոյժը, դրանով պիտի բացատրել այն մռայլ խոհերը, որոնք ճընշում են մարդու հոգին նրա ներկայացումը տեսնելուց յետոյ։

Հէնրիխը ինքը մարդն է, յաւիտենական ճանապարհորդը, որ վազում է անյայտի յետեկփց, իր հետապնդումների մէջ նա անցել է մարդկայինի սահմանը, և ենթարկւում է զարհուրելի կարսատրօֆի։ Երբ լեռնային Ֆէան նրան գտնում է վիրաւոր, չարդուած իր դրանն ընկած՝ ասում է։

«Ինձ թւում է, որ գու սովոր չես լեռներին. դու, երեի այն մարդուկների ցեղից ես, որոնք տէր են այստեղ՝ ներքեւում և բարձրացել ես շատ բարձր»։ Այս, Հէնրիխը այն մարդուկների ցեղից է և աշխատում, աքնում է այդ մարդուկների

համար, նու մի զանդ է ձուլում նրանց եկեղեցուն, որոնց երաշակութեան և միբիթարութեան համար, Բայց այդքանը չի է, շատ քիչ մի մարդու համար, որի վրայ ճանրացած է առաջնութեան, նահատական թեան ժամը հակառագիրը. Հենրիին մի ընտրեալ է, և այդ իմանալու համար անհրաժեշտ է կարծեն մի զարեղ հսկեկան ցնցում, մի ման և մի վերածնութիւն. Պատկալի ասածի պէս, թէ ուրի ծանր հրանզութիւնը փրկարար է և նա ընկնում է, փշուում, համարեան մեռնում, որպէս զի իմանայ, թէ պէտանքը ման է և մանը՝ կեամբ, ինչպէս ինքն է առաջ.

Նա այժմ միայն հասկացաւ, որ իր դործը, առաջին զանգը «Հարթավայրելի» և ոչ թէ բարձր լինելորի համար էր... որ նա առկասար զործէրու ևն, առում է Հենրիի, որտի ցաւով էի ընթանում նրանց յետեւից դէպի կատարները, ևր ազմը կուելով և ուրախ-ուրախ նրանք տանում էին զանգը դէպի վեր և նա ընկաւ... ևս էլ չեմ կամենում ծառայիլ հարթավայրերին, նրանց աշխարհը էլ չի հանգստացնում իմ յարատե և ուսն արիւնը Բոլորն ինչ իմ հոգում ապրում է այն ժամանակից, որ ես եղայ լեռներում, ձգւում է նորից դէպի ամպերից վեր բարձրութիւնները, թափառելու մասախուզների ծովի վրայ և ստեղծագործել բարձրավորների թափուի Եւ որովհեան ես անզօր եմ այդ անելու, հիւանդ՝ ինչպէս այժմ, և որովհեան թէ ես բարձրանամ էլ, նորին՝ կ'ընկնեմ, աւելի լաւ է թնդ մեռնեմ Սրկրորդ անգամ ապրելու համար ես պէտք է... սրտումս զգամ առողջութիւն, երկար՝ ջերիս մէջ, ոյժ՝ ձեռներումս, և խելագար տիրապետողի եամանցը, որպէս զի կարողանամ ստեղծել մի սքանչնի, մի շր տեսնուած զեղեցիկ դործ։

Իր անկումից յետոյ, իր պասուկակեան հրանզութեան մէջ նրա աչքերը բացում է ոգին, մայր բնութեան յարատն դէպի կատարելութիւն ձգտող, դէպի անյայտը և զեղեցիկը զիմող զաղտնի զօրութիւնը, որ ապրում է անտաների և լինեների խուլ ամայութեան մէջ, ևն մարդ եմ և կոյք, առում է Հենրիի Բառաւենդէյնին, բաց իմ աչքերը, և երբ առաջին անգամ տեսնում է, Շայիր, Շայիր իւն, առում է հրանդ Հենրիիը Բառաւենդէյնին, քո խորհրդաւոր, խորունկ հայիացքով, Հասկացիր, քո աչքերում վերատեղծւում է աշխարհը, երկնային կապոյաց իր թափառող ամպերով, իր լիսներով, կրկին զիմում է ինձ աշխարհը... Ընկայ, ես ապրում էի, զանգն էլ ընկաւ, մնայ երկուով, ես էլ, նա էլ, ով առաջինը, ես և նա իմ յետեւից, թէ նա, ես նրա յետեւից, ով կ'ասի, ով կապեր է հասկանալ... Ան-

ինձ մօտ, իմ ձեռքը մեղաւոր չէ, իսկ դու սուրբ ես, Այն, ես քեզ ճանաշում էի: Ես քեզ տեսել եմ Ուր: Ես ապրում էի, ես պայքարում էի, որքան շատ օրիր ես քո մասին եմ մտածել: Ես աշխատել եմ քո ձայնը զանդի հնչիւների մէջ դնել... Այդ յաղթանակի մտախն ես միշտ մտածել եմ և նրան համել ես չը կարողացայ երբէք և լալիս էի արիւնի արցունքներով: Անկում մից և «հիւանդութիւնից» յետոյ Հէնրիխի ցանկութիւնն է իր իսկական առաքելութիւնը կատարել, հեռանալ աշխարհի մանր մունք կարիքներից ու շաւերից և վեր բարձրանալ այնպիսի տեղեր, ուր կարելի է ընդգրկել ամբողջութիւններ, ուր կարելի է զերագոյնը երազել ու փնտոել:

«Քո քնքոյց ձեռքով, ասում է նա իր բարի ոգուն, ազատիր ինձ այս յոգինեցուցիչ աշխարհից, որի հետ ժամը կապել է ինձ շղթայով, ինչպէս խաչին մեխած, աղատիր ինձ, դու այդ կարող ես, ես զիտեմ, և մէկ էլ... այստեղ, իմ զլիից հան նաև այս փշէ պատկը, որ նրանց ձեռներով է հիւսած ինձ համար: Պատկ պէտք չէ. սէր, միայն սէր: Ոգին կատարում է նրա ցանկութիւնը, նա նրան կտրում է աշխարհից, և բարձրացնում է վեր, վեր լեռնակատարները, մօտիկ երկնքին և այստեղ՝ անհոգ գէպի ամեն ինչ, որ փռուած է իրանից ներքեւ հարթութեան վրայ, անտարբեր գէպի ամեն ինչ, որ անցնում, դառնում է իր ոտքերի տակ, զերագոյն առաքելութեան համար մոռացած անգամ իր զաւակներին և իր կնոջը, ոգեւորուած Ռառուզենալէյնի գիւթիչ սիրով, նա սկսում է իր սիրոյ մեծ առաքելութիւնը: Զարդիքի թագաւորութեան մէջ հնչում է նրա մուրճը ահազնադղորդ, չար ոգիները գողում են իրանց այրերում և մոմուում, բայց Հէնրիխի փոյթը չէ, նա յանձն է առել սիրոյ զամանակոյն առաքելութիւնը, նա գտել է, որ ժամանակից հասարակական կազմը խախուտ է, անբաւարար, և որ հարկաւոր է նոր հիմունքների վրայ դարբնել՝ նոր հասարակութիւն, նոր կարգեր, որովհետեւ, ասում է նա պաստօրին «Ձեր փոքրիկ եկեղեցին մասամբ աւերուել, մասամբ այրուել է, և այդ պատճառով այնտեղ լեռներում ես կամենում եմ ձգել նոր հիմունքներ և այդ հիմքերի վրայ նոր աաճարք: Եւ այդ նոր կարգերը, նոր զաղափարները աւետելու համար նա բարձրագոյն լեռներում ձուլում է ազնիւ մետաղից մի նոր հսկայական զանգ, որ պիտի հնչի ինքն իրան, բարձր ու քաղցր, հէնց որ Հէնրիխ նրան զիւզի իր ձեռքով: Բայց այնտեղ հարթափայրում մի այլ կեանք կայ, նա, որին առաջ պատկանում էր Հէնրիխը, որի վարիչներն են պաստօրը, ուսուցիչը և սափրիչը: Այնտեղ ամբոխ կայ, մոլեռանդ, հին, մգլած հասկացողութիւնների

կոչք հետեւազ, նորութիւններից, խոշոր զննութեարից դպրուազ, ևս՝ որին պատառի քարոզները մեխել են անշարժութեան տար-
սին, որի հայեացը զարձած է զեսի երկինքը, որով պերաղայն
անօրթօնող բազգերի՝ այսակ երկրի վրայ, Պատառը զայիս է
յանուած հարթափայրի նզովելու ՀՅորիիին, որի իրազարում է եր-
կրների առաջ նզովելու նրա գործը՝ որ վիրաւորում է Աստծուն.

Ալենն ինչ վերջացած է, առամ է պատառը. զուք խորա-
պէս թաթախուուի էք շարիքի մէջ... էլ ոչինչ չունեմ տեսչու,
բայց միայն մի բան մի մռացեք, կախարդների համար
զեռ վառ են խարոյիները որպէս առաջ, հերեաթիկաններին, ինչ-
պէս առաջ և այժմ ապասում է կրտեկը. Vox populi, vox dei.
Այն ինչ զուք այժմ անում էք զազանի, որպէս հեթանու մնա-
զանից ծածուկ չէ, մեր վարժուածնն առն տեղ յարուցնում է
զզուանքը. Չեզ առում են և շատ հաւանական է, որ երբ
վրդավճունքը սասարիկ զօրաւայ, որ էլ զազել անկարելի լինի,
ոյն ժամանակ ժողովուրդը տեսնելով իր սրբութիւնը վիրաւո-
րուած, խմբով ներս կը խումի մեր արհեստանոցը և անզորմ
կերպով կ'աւերին.

Սպասնալիքները ՀՅորիիին չեն վախեցնում, չեն որ նա մի
տառքեալ է, քարոզող նոր կեանքի, նա ընդունում է, որ պատ-
առը ասածը նարաւոր է, որ ժողովուրդը, ամրոխը միշտ քա-
րեր է շարտել իր խոկ փրկիչների զլիխն ևս չեմ զարհուրում.
առում է նա, այրող ծարաւով աանջուղին ևս մօտեցնում եմ
դիսով լի բաժակը, խոկ նա մի հարուածով վար է ձպում իր
ձեռքից և բաժակը և զիսին, զա նրա կամքն է, և զուցէ, նրա
հակատագիրը, ևս մեղաւոր չեմ: Մեղքի և անմեղութեան ահն-
մանները տարրեր մարդկանց և տարրեր զաստկարգերի համար
նոյնը չեն, ինչ որ անմեղ է ՀՅորիիսի համար, նոյնը մեղաւոր
դործ է պաստօրի համար, իսկ որ վսեմ է ընտրեալ հոգիների
համար, նոյնը շատ անզամ անհասկանալի և յանցաւոր փորձ է
մոլորուած ու խաւար ամրոխների համար ժամանակն է որո-
շում անցեալի արժէքը, խոկ մինչև այդ զոհեր, զոհեր և զար-
ձեալ զոհեր...

Եւ ՀՅորիիը զոհւում է, ամրոխը աւերում է նրա գոր-
ծանոցը, նա չի ուզում նոր զանզը, որ փրկութիւն պիտի ա-
ւելաւէր, նա վախենում է այն բարձրութիւնից, որտեղից պիտի
հնչէր նրա դիւթական ձայնը, նա զանում է, որ պաստօրը ի-
րաւունք ունի, որ զարմանալի վարպետը երկնվի դէմ է խիզա-
խում, և անհրաժեշտ է խորտակել, վար քաշել նրան և ՀՅորի-
իսը խորտակւում է, վար ընկնում ջախճախուած, այլ եւս երբէք
վեր չը բարձրանալու համար. Առաւօտ է, լոյսը բացւում է,

երբ Հէնրիխ մեռում է, նա տեսնում է արեւը և բացական-չում՝ «Արեւը ծագում է... Արեւը, զիշերը երկար է», Արեւը ծագում է, բայց զիշերը երկար է, որովհետեւ այս արեւը չէր Հէնրիխի փնտածը այս չէր, որ նա սպասում էր, նրա համար այս արեւով հանդերձ դեռ զիշեր է աշխարհի վրայ:

Հէնրիխի վիթխարի պատկերի տոսաջ մարդ ակամայ յիշում է Նիցշէի Գեր-Մարդը, բայց այս երկու տիպերը չեն ծեփուած միեւնոյն գաղափարական զանգուածից: «Մարդը մի ձգուած լար է, ասում է Նիցշէ, անսառւնի և Գեր-Մարդի մէջ, մի լար անդունդի վրայ, ինչ որ մ'ն է մարդու մէջ այդ այն է, որ նա մի կամուրջ է և ոչ նպատակ և ինչ որ կարելի է սիրել մարդու մէջ այդ այն է, որ նա մի անցք է»... Հէնրիխի սէրը արտայայտում է այլ կերպով, նա, ամբոխի դէմ զուրս գալով ասում է՝ «Զեզ համար՝ ես ձեզ գէմ եմ, առ հա իմ լօղունգը»: Հառապտմանի համար մարդը նպատակ է, ինչպէս և Կանտի համար, Նիցշէն նրան սիրում է միայն իրեւ մի միջոց այլ նպատակի հասնելու համար, որը նրա Գեր-Մարդն է:

Հառապտմանն արդէն գտել է իր Գեր-մարդը և նա նրան տառապելինում է աշխարհի համար, Նիցշէն արորում, քամում է աշխարհը նրանից Գեր-Մարդը ստեղծելու: «Աղասիիր ինձ այս յոդնեցուցիչ աշխարհից» ասում է Հէնրիխ իր բարի ոգուն, «Հաւատարիմ մնացէք աշխարհին, ասում է Զարադուստրան և մի հաւատացէք նրանց, որոնք ձեզ խօսում են գերաշխարհային յոյսերից»:

Այստեղ, տեղը չէ աւելի երկարացնել այս համեմատութիւն-ները, որ նոցով գուցէ կարելի կը լինէր աւելի որոշ կարծիք կազմել Հառապտմանի Հէնրիխի և Նիցշէի Գեր-Մարդի նմանողութիւնների և տարբերութիւնների վրայ, բայց ընդհանուր խօսքեարով կարելի է ասել, որ մէկը յիշեցնում է միւսին, որ նրանք երկուն էլ մի-մի տիտաններ են, ամբոխներից վեր կանգնած, և որոնք աշխատում են տիտաննեան բաներ անել, բայց տարբեր ձգտումներով:

Անպայման չնորհակալութեան արժանի են նրանք, որոնք «Խորասուզած զանգը» հայ բեմի վրայ դրեցին, ձշմարիտ է, պիեսայի հիմնական գաղափարը ինչպէս այս յօդուածի սկըզբում ասացինք, շատերին անհասկանալի մնաց, բայց հէնց այն հանգամանքը, որ այդ ներկայացումը յարուցանում է այնքան հարցեր, որ մտածել է տալիս, հետաքրքրութիւն է զարթեցնում դէպի շատ հասարակական, բարոյական խնդիրներ, բաւական է, որ այսպիսի գործը դարձնի մի գրաւիչ անհրաժեշտութիւն:

Մեր զերտառական խմբի կողմէն ի նկատի անձնավոր կարելի է առել, որ զերերը լուս էին բաժանուած։ Այնպիսի պիտաներ, ուր ֆանտասիկը և գերբնականը մնան զեր ան խաղամ, հեշտութեամբ կարելի է չափազանցութիւնների մէջ ընթառ-
լով ճիծազիլի կարբիկատուրա առաջ քերել։ Արախ մնաց առել, որ ներկայացումը ծայր է ի ծայր անցաւ միանգամայն բաւարար, Գիշաւոր զերակատարների մէջ առաջնութեան գամիօնն պատ-
կանում է պ. Արէլեանին, Հէնրիխի զերը կարծում մնաց ժամանա-
կով նրա լաւագոյն զերերից մէկը կը դառնայ։ Դա շատ կողմից համապատասխանում է նրա տեսմերամենաթին, նրա լոյն, հա-
մարձակ շարժումներին, անպամ նրա կազմուածքին։

Պ. Գնարեսեան հիմնալի պատոր էր։

Տիկին Մայաուրեան Բառաւենդրէնի զերով յանձն էր ա-
րել մի զժուար, բայց զրաւիչ զործ։ Սիլֆայի անհոգ երերա-
յին պատկերը նա կարողացաւ։ Ներկայացնել բաւական յաջող
և այդ չնորդի կօկնու, կենսուրախ տիպեր ներկայացնելու
իր անպայման միքքին։ Մի բան, որ զժուարացնում էր արինչով
զործը, և որ նրա ընդունակութիւններից անկախ հանգամանք է,
զա նրա կազմուածքն էր, որ հետութեամբ չէր ուզում փոր-
րանալ ու եթերանալ Սիլֆային համելու համար։ Պ. Մամբէու-
նեան անտառային ողու զերում կարող էր մի փոքր աւելի աշ-
խայի լինել և պոչի կէսը համարձակ կարող էր կուլիսների յե-
տեւում թողնել, զա խաղին ամեններն չէր վեսախ Պ. Յարու-
թիւնեան ջրային ողու զերը զլուխ հանեց և ամրոզութիւնը
բարեխղճօրէն լրացրեց։

Հոկտեմբերի 28-ին խումբը Ռուբեկայացրեց «Տօնածառ Նե-
մերօվիշ-Դանչների և «Մի բազէ հանգիստ չունենա» Մեամսից-
կու։ Դա մի թիւրիմացութիւն էր։

Նոյեմբերի 4-ին խաղացին «Տրիլիի», հեղ. Գէի, թարդմա-
նութիւն Յ. Արէլեանի, Նիւթը զերցրած է արտիստների կեսն-
քից, այն կենսուրախ, անհոգ, թիթեռների պէս մի օրով միայն
տարգկանց միջավայրից։ Արոնք կարծես հակատազրա-
պէս իրանց խենթութիւններին մրացնում են սէր դէպի գեղա-
րուեստը Բայց պիեսայի հիմնական նպատակը այդ կեսնաքր-
ներկայացնելը չէ, թէև Տրիլիի, արտիստներին մօղել ծառա-
յող աղնիւ աղջկայ անոնք մլրտուած է այդ զրամատիկական
զործը։ Պիեսայի խոչոր և հետաքրքիր տիպը Տրիլիին չէ, այլ
Սվէնդալին, մէկն այն անթիւ հրէա տաղանդներից որ դարերից
ի վեր տառապող ցնդը որպէս պատասխան աշխարհի անողոր-

մուլեան և իր կրած հալածանքների, մէկը միւսի յետեւից դուրս
է մղում իր հարուսաւ ծոցից, և դռներում սողալով ծհծուած,
անարգուած, հրաշքներ է գործում: Հեղինակը այդ տիպի մէջ դրել
է այն յատկութիւնները, որոնք հրէային զարձնում են անխո-
ցելի իր թափառական և ցաւոտ գոյութեան ընթացքում: Սիէն-
գալին երաժիշտ է, հանճարեղ արուեստագէտ և միեւնոյն ժա-
մանակ հիպնոզացնելու դիւթական կարողութիւնն ունի, որով
կարող է շահագործել՝ երբ և ում կամենայ: Արտիստների շրջա-
նում նրա հետ վարւում են ինչպէս յետին արարածի հետ, ա-
մեն վայրկեան հարուածները տեղում են նրա մէջքին, զլիխն,
նրան անարգում են, չարչարում, բայց Սվէնգալիի փոյթը չէ,
նա այնտեղ է, նրանց մէջ, հարուածների տակ գալարուում է
օծի պէս և ապրում: Աշխարհը նրա տաղանդը չէ ճանաչում,
Սվէնգալի անունը դեռ ոչ ոք պատկառանքով ու հիացմունքով
չէ արտասանում, միայն ողորմելի ժէկկօն է, թափառաշրջիկ,
գզզուած գերասանը, որ հաւատարիմ շան նման հետեւում է
նրան և զիտէ ինչ է անում: Բայց Սվէնգալին չի յուսահատ-
ուում, հրէան յուսահատուել չը գիտէ, նա տքնում է, կրում է
ամեն մի վիրաւորանք, ամեն մի ննզութիւն հոչակաւոր, մեծ
դասնալու համար: Նրան չարչարում են, զրկանքների ենթար-
կում, բայց զրա փոխարէն նա ցոյց կը տայ աշխարհին թէ ին-
քը ոյժ է, մեծ ոյժ, և նա կ'իշխի իր հանճարի ոյժով և նա
համնում է իր նպատակին: Տրիլրին գեղեցիկ կին է, հրաշալի
կազմուածքով մօդել, Սվէնգալին նրան հիպնոզացնում է, հրա-
մայում է երգել բեմերի վրայ, և դառնալ մեծանուն և երգչու-
հի, բայց ինչ տանջանքների դնովի Այդ կինը հրէական վրէժ-
խնդրութեան զոհն է, քաւութեան նոխազը, որ տառապող
ցեղը վերցնում է իր հալածողների շրջանից: Ինչպէս տեսնում
ենք պիեսայի հիմնական գաղափարը խիստ հետաքրքիր է, բայց
քիչ անգամ է գրուել զրումատիկական գործ, ուր տեխնիկայի
մէջ այդ աստիճան արուեստականութիւն լինի: Արդէն երբ
գեղարուեստական գործի մէջ այդ աստիճան խոշոր բաժին է
ունենում հիպնոզը: Երբ հեղինակը հեշտ միջոց է գտնում
ստեղծել անակնկաներ առանց որ այդ անակնկաները արդիւնք
լինէին հոգեբանական կացութեան և իրերի խոկական տրամա-
բանութեան, կարելի է ասել, որ գործն սպանուած է, որովհե-
տեւ ամենատեսակ արսուրդներ դուրս թափելու ճանապարհը
բաց է: Տրիլրին կարող է միշտ յաջողութիւն ունենալ հեռու չը
մտածող և ֆէկրվերկների, թեթեւ էֆֆէկտների, ցիրկին մօտե-
ցող ներկայացումների սիրահարներին, բայց վերին աստիճանի
անախորժ կը լինի նրանց համար, որոնք որոշ, բնական, հոգե-

բանօրէն նորմալ պահանջներ ունեն որևէ է զեղարքահասական դործից:

Սվենդալիի գերը կառարեց ող. Արէլիոն, զրկաւչների հեռակայ, անարդուուծ, բայց ապանզաւոր հրէայի տիոց այդ երեկոյ ունեցաւ իր լաւ բացարողը, Տիկին Մայսուրեան, որ կառարում էր Տիկիրի գծուար գերը յախոզութեամբ զրոյն հանեց իր պարտաւորութիւնը, Բայց նա անզայտան աւելի լու էր իրրեւ մօղել, քան երբ զրամատիզմ պիտի Ներկայացնէր, Առնասարակ ևթէ Ներկայ հայ վերասանական իսմրի մէջ կայ մի արտիստ, որի վերաբերմամբ Ներոզամատութիւնը իր իսկական անզումը կը լինէր, զա Տիկին Մայսուրեանն է Շատոպում են աւելիացնել, որ այդ Ներոզամիտի վերաբերմանը բնաւ արդի նը չէ տիկնուջ թեմական ընդունակութիւնների շափառութեան, այլ այն ծանրակշիռ հանգամանքի, որ նա անիմափր յանձն է առնում ամեն տեսակ զերեր, Թատրոնական կոմիտէն է արդեզր նրան այսպէս ծանրաբեմում, թեժիսաօրը, թէ ինքը՝ տիկինն է անարքեր դէսի իր ընտրութիւնը, այդ չներ կարող տաել, բայց ինչ որ հաստատ է այդ այն է, որ այս աստիճան բազմազան զերերի մէջ շատ տեսլի խոչոր տաղանդ կարող էր խճառել, Դերասանական ամպլուան մի դասարկ խօսք չէ, նրա տակ ծածկուում են արտիստի հոգեկան կարոզութիւնները, ստար, իրանից դուրս ծնած զգացմունքների վերապրելու իր ձիքքը, Ամենայայտնի զերասաններն անգամ իրանց ամպլուան ունեն, նրանք կամ հանձարեղ կօմիկներ են, կամ հանձարեղ տրագիկներ, բայց ոչ երկուուն էլ միանգամից և հաւասար շափուի, Համարեա հասատ կարելի է տաել, որ տիկին Մայսուրեան մի չնորհալի զերասանութիւն է, երբ պէտք է Ներկայացնել կօկեա տիպեր և համեմատարար աւելի թոյլ, երբ պէտք է խորին դրամատիզմ արտայատել, Շատ բնական էր սպասել, որ տիկինը առաջին կարգի զերերին առաւելութիւն տար և ոչ երկրորդ Դա միակողմանիութիւն է, մենք համաձայն ենք, բայց ուրիշ կերող չի էլ կարող լինել, աշխատանքի բաժանումն էլ միակողմանիութիւն է, սակայն զա իսկական յառաջազիմութեան անհրաժեշտ և հզօր զործօնն է:

Նոյեմբերի 11-ին խազացուած «Օտարների» մասին շատ և շատ բան կարելի է տաել, Հաւատացած եմ, որ զա տիսուր, զուցէ և յոռետես, խօների մի առիթ եղաւ հանդիսականներից շատերի համար, եւ ճշմարիս այդ պիեսայի ոուտ հեղինակ Պատապինիօն ընտրել է մի այնպիսի հակազրութիւն երկու հաւասարական բարոյական դրութիւնների, որ անկարելի է տանց յուզմունքի նայել, անկարելի է ընդհանրացումներ չանել և

անալօգիաները չը փնտուել մեր շուրջը, նա հանդէս է բերել վաթսուռ-
նական և ուժուռնական թուականների ոռւս սերունդները նախուկին
ուսուցիչ Դըբօլցեւի և սրա որդի Կոնստանդինի տիպերով, Բնա-
կան է թւոււ կեանքի մէջ փնտուել դառն փորձութիւններով
կենսական իմաստութիւն ձեռք բերած, զգոյշ, շրջանկատ, եօլա
գնալու փիլիսոփայութեան պաշտպան հայրեր և տաք - գլուխ,
ազնիւ արկածների, անձնազոհութեան, գրաւիչ գժութիւնների
սիրահար զաւակներ; Բայց ահա Պօտապենկօն մեր առաջ դնում է
հայրերի և որդիների այլ սերունդներ, ուր իրերը ընթանում
են բոլորովին հակառակ կարգով, ուր հայրն է զաղափարական,
շիտակ, անձնազոհ, և որդին նիւթապաշտ, հաշուագէտ և զուրկ
որեւ է բարոյական պրինցիպից: Այս պիեսայի բոլոր տրագիզմն
այստեղ է, դերերի այս փոխանակութեան մէջ, պառաւած երի-
տասարդութեան և հոգով չահիլ ազնիւ, զաղափարական ծե-
րութեան ընդհարման մէջ:

Դըբօլցեւ, ալեզարդ մի ծերունի, նախուկին ուսուցիչ է
վաթսուռնական թուականների գաղափարական սերունդի ներ-
կայացուցիչ, որ իր ծերութեան օրերում մնացել է նոյն ազնիւ,
իդէաներով յափշտակուող, շիտակ, գաղափարական մարդը,
որպէս ուսանող ժամանակ, այն յոյզի, խանդի, գժութիւնների
տարիներում: Իր շուրջն ամեն ինչ փոխուում է, ամեն ինչ ըն-
թանում է այլ ճանապարհով: Հաշիւր, նիւթապաշտութիւնը բա-
րոյական կոմպրոմիսները խեղդում են ամեն ինչ: Նոր սերուն-
դը բարոյական սրբութիւնները ամեն օր ոտնակոխ է անում,
հաւատը դէպի վաեմը և ազնիւր կրծոտուում, արիւնոտուում է
հրապարակով, և նէքսպիրի ասածի պէս հաւնում է ժամանակ,
երբ՝

«... Ուռած դարու այս գերութեան մէջ
Պէտք է նոյն ինքն առաքինութիւնը
Ներողութիւն խնդրէ մոլութիւնիցը.
Այս, խոնարհուի, պաղատանք անէ
Եւ հրաման աղերսէ բարիք գործելու».

Եւ այդպիսի դարում նախուկին ուսուցիչը իր բարոյական
ամբողջ պատկերով մնում է անդրդուելի, նա մի ժայռ է, որի
վրայ խորտակւում են բոլոր ախտաբեր հովերը, նա մի եղակի,
սփոփիչ երեւոյթ է:

Դըբօլցեւ տիբութեամբ է տեսնում բոլորն ինչ կատար-
ւում է իր շուրջը, նրա միակ միսիթարութիւնը իր որդին է,
Կոնստանդինը, որին կրթել, դաստիարակել է իր բարոյական
գաղափարների, իր հասկացողութիւնների համեմատ, նա աշխա-
տել է նրանից պատրաստել մի ազնիւ մարդ, մի անձնուէր,

Հաստրակական շաւերին արձագանք ուռող մի հայրէ և Ն համազաւած է, որ իր որդին այցպէս էլ լինելու է. իր որդու վերաբերմամբ ունեցած հաւատը չի խսիսաւած և այն համա-
նակ, եթի իմանում է. որ նա գաղտնի է կերպով ապրել է իր հե-
ռու ազգականունու Ալբայի հետ. որից և երեխայ ունի Որ-
դին հաւատացնում է իր հօրը, թէ նա ամուսնանալու է որդ
ազգից հետ և ձերաւին մանկական դիւրաւաւանութեամբ հա-
ւատում է. չի նա իր որդին է, ազնիւ, գաղափարական ուռու-
չի որդին Սակայն որըան մեծ է լինում նոր ցան ու կոկիծը,
երբ յանկարծ խմանում է. որ իր բոլոր զաստիարակութիւնն
անօգուտ է անչել, որ իր անձնական շիտակ, ազնիւ կեանքը
որդու վրայ ոչ մի ազգականութիւն չեն թուզել. Կանոնազինը ոչը
սերնդի է պատկանում, նա հրեթարաշտութեամբ ուռում և
զերոց ժամանակի զաւակ է. որ չի խզնաւրում գէն շպրտել
Ալբային, որի զաւակի հայրն է. ամուսնանալ մի հարուս
այրիի հետ Բարօյապէս այլազակուած այս հրէշտառը սերու-
զի մէջ ձերօնի ուսուցիչը մի մաերիմ բազզակից միայն ունի,
զա իր ուսանողական ընկեր Զավզեազօվն է, որ իր միջավայ-
րում նոր սերնդի գարշութիւնները ըլ տեսնելու համար մշտա-
պէս ապրում է արտասահմանում և վրայ է հասնում ճիշտ այն
ժամանակ, եթի Դըրօլցիւը կարօտ էր մի սփոփիչ խօսքի, մի
տաք մաերիմ սրտի. Երկու ձերունիները, հին գաղափարական
սերնդի երկու մոնիկանները իրանց չուրջը, իրանց աչքի տառ
կատարուող ստոր արարքների հանդէալ վշտի և զայրոյթի մի
յետին ու ազնիւ ճիշ միայն ունեն Զավզեազօվ ցաւոս խոր-
հրզաւորութեամբ օրորում է իր ձեր ու խօներով հարուս
զլուխը, իսկ Դըրօլցիւ շպրտում է իր օրդու երեսին «վաճա-
ռուած, անարդ վաճառուած», ածականները, և երկու ձերու-
նիները զուրս նն զնում ձեռք ձեռքի բանած, թողնում նն այս
բարոյապէս ապականուած, ննխուած երիտասարդութիւնը ուր
նրանկ «Օտարներ» են:

Նայում ես այս պիեսային և սիրադ ցաւով լցւում է,
շուրջը իշխող իրականութիւնը զբական այս գործին տալիս է
մի ոյժ, բեարական մի խաւար պատկեր, ուր ոչ մի փայ-
լուն չող չի զալիս թեթեւ լոյս սփակուու Ռուս հասարակու-
թեանը, զոնէ մօտ քանի և հինգ տարի հարկաւոր եղաւ, որ
երկու սերունդներ այլ եւս իրար չը հասկանան. իրար համար
օտարներ լինին, իսկ մեզմանում տան տարին և մի քաղաքից
միւն անցնելը բաւական եղաւ, որ բարոյապէս մետամօրթօզան
անձնաշնչի դարձնի երեկուայ ազնիւ, գաղափարական ձրդ-
առումներով ողււորուած սերունդը Այնակ զնուկ կարելի էր

երկու սերունդ իրար դէմ հանել, մի ժամանակ կար, որ աւելու-
մունք գործեց, ծերավիքներ կային որոնց պսակն ու խաչը ծանր
էր զալիս յաջորդ սերնդի զլիսին ու թիկունքին, մեզանում
միեւնոյն սերունդն է յետ նայում և հեզնութեամբ դիտում այն
ճանապարհու ուր մի քանի տարի առաջ միայն նա քայլում էր
ազնիւ խոհերով ծանրաբեռնուած զլիսով. միեւնոյն սերունդն է,
որ իր երեկուայ պատկերը չի միշում, այլ եւս չի ճանաչում
միեւնոյն սերունդն է, որ անարգում, արհամարհում, հեզ-
նում է այն ինչ անունով երէկ երգուում էր, պառաւած հիւ-
ծախտաւոր սերունդ, այս «ուռած» և «գեր» ժամանակի իսկա-
կան զաւակ, զործնական, հաշուագէտ ոգու խսկական վիժմունք,
որի ազնիւ գութիւնների, և խելացի գարշութիւնների մէջ
ժամանակն այնքան կարծ եղաւ, որ «գեռ չեն մաշուել այն կօ-
շիները, որոնցով նա տանում էր իր զալափարները գերեզման
դնելու բայց նա արդէն անձանաչելի է: Իրականութիւնն այն-
քան յաւոտ է, մեր շուրջն իշխող զործնական, գծուծ նիւթա-
պաշտութեան ոգին այնպիսի աւերմունք է դործել, որ մեղանում
սակաւաթիւ «Օտարները» մի անցած սերնդի մնացորդներ չեն,
այլ նոյն սերնդին, նոյն ժամանակին, նոյն միջավայրին պատ-
կանող Ընկերն ընկերին էլ չի ճանաչում, իսկ ազնիւ յափշտա-
կութիւնները և իդէաները դարձել են վաճառքի ապրանք, մի
Դըրօլցեւ համարձակ կերպով կարող էր բացականչել և մեր
կօնսատանդինների երեսին՝ «վաճառուածներ, անարդ վաճա-
ռածներ»:

պ. Պետրոսեան այն երեկոյ կատարեց Դըրօլցեւի, զալա-
փարական ծերունու դերը և գուցէ խաղաղ լաւագոյնը իր դե-
րերից: Կեանքից վերցրած պիհսանների մէջ, երբ մանաւանդ
պէտք է ներկայացնել վշտացած ծերեր, պ. Պետրոսեան միշտ
լաւ է, ինչպէս ծերունի Վանիչինի դերում. բայց «Օտարնե-
րի» մէջ նա գերազանցեց բոլորին: Դա մի անմոռանալի երե-
կոյ եղաւ Պօտապեմկօի և պ. Պետրոսեանի չնորհիւ: Երկու ան-
գամ նա բարձրացաւ նոյն-իսկ մինչեւ առաջնակարգ արտիստ-
ների խալլը նախ այն ժամանակ, երբ հանդիպում է իր հինա-
ւորց ընկերոջը Զավլեադովին և մէկ էլ այն խորին դրամա-
տիկական վայրկեանին՝ երբ վերջնականապէս երազեկ իր
գում ստոր արարքին, դասնացած հոգուով գուրս է թափում
իր ազնիւ սրտում կուտակուած բոլոր ցաւն ու զայրոյթը, երբ
այն բարի, շիտակ մարդու զիրաւարուած առաքինութիւնը ու-
զում է նոյն-իսկ իր ծեր բազուկներով խեղդել այս նոր ու գար-
շելի սերունդը: Պ. Արէկեան իր երկրորդական դերով շատ անե-
լիք չունէր, նա միայն մի դեկորացիա էր աւելի բելիք դարձ-

ներու հին սկրունդը և նաև իր զրիմավ, իր շարժութերով, անգամ իր անրածոն ձեռնափայտով ևզաւ մի զեղեցիկ զեկորացիա. Դըրալիւ. Պետրոսեանքի խսկական մտերիմը ևզաւ լրացնալով նրա փայլուն խաղը:

Ներկայ զերտառանական խմբի մէջ մի հնատպրըքիր անհաւորութիւն կայ, որ իր համեստ զերերով յաճախ մնում է անհկատելի, բայց, իրոք, նաև մի կողմից կարող է օրինակ ծառայել է շատերին՝ զա տիկին Վարդուհին է, և առ երբեք իր ուժից և իր ընդունակութիւններից վեր, իր ձերքերին անհամապատասխան դեր չէ յանձն առնում. «Վայրիւշինի զաւակներից, մէջ նա պառաւ մայր է. «Անորասուզած զանզի» մէջ նա պառաւ Վիտարցինն է, ինչպէս և այս «Օտարների» մէջ Դըրալիւի պառաւ կնոջ Մուրինա Խօնաւանայի դերն ուներ Մենք նրան համարեա երբեք չնոք տեսել անհամապատասխան զերում և ծարիք այս էտկան հանգամանքի նրա խաղը թէեւ մրակերպ, միջամից շատ չը բարձրացազ, բայց միշտ հարթ է, միշտ զուրեկան կըրկնում ենք, սա մի հանգամանք է, որ չը պէտք է խուսափէ այն զերասանների հայեացքից, որոնք զերերի ընարութեան մէջ խիստ անխարեական են:

Իր բննեփիսի համար նոյնմերի 15-ին պ. Պետրոսեան ընարել էր «Ուրիէլ Ակոստա» կարլ Գուցկոսիի Միջազգյուր՝ որ Գուցկով ընարել է, զաժան, անհամրերող ոզու և լայն սիրուց բզիսող գաղափարների ընդհարման համար, աննաման է: Փարփսեցինների մի ամրողջ բանակ, մզլած, հոտած զրգերի տառաերի վրայ չորացած զլուխների մի ամրողջ հօտ, որ լսել չէ կամնում, թէ իր ճանաչած մազաղաթների սեւ ու սպիտակից գուրս ուրիշ ճշմարտութիւն գոյութիւն ունի, կամ կարող է գոյութիւն ունենալ աշխարհում ևւ այս անդրդուելի ժայռի վրայ, որի անունն է կրօնական տրապեցիա, դոգմ. անսփալուկանութիւն, զալիս է խորասակուելու մի ազատ միավ, մի լայն համբերող սիրա, մի ազնիւ հոգի Տրագեդիան կակծեցուցիչ է, Ազատ մաքի դարաւոր պատմութիւնն է այն. Սօկրատ, Քրիստոս, Բրունո, Գալլիլյ, Սպինօզա, բոլոր մեծ մաքերն ու առաքինութիւնները ծանօթ են այդ տրագեդիային:

Ուրիէլի առաջնակարգ զերը կատարեց պ. Պետրոսեան, բեմի վրայ մենք տեսանք երիտասարդ, յախուռն, ու տենդու մրագը՝ մերթ սիրոյ կապանքներում ընկճուած, ինչպէս թաշունը վանդակում, մերթ կատաղի գուրս պոռթկալիս, ինչպէս մի առզուսպ հեղեկ, Ափսոս որ պ. Պետրոսեանի ձայնը խզուեց հէնց է գիտեկտի վայրկեաններին.

Պ. Արէլեան կատարում էր Դը-Սահտօսի գերը, և այդ ըստ երեւյթին երկրորդական գերից նա կարողացաւ ստեղծել մի կենդանի, իրականութեամբ համարեա շշմեցնող տիպ, Յաղթանակի բռպէներին գօգմի անունից խօսող Դը-Սահտօսը, չնորհիւ պ. Արէլեանի անմարան միմիկայից կը մնայ անմոռանակի, նա ոչ մի տեղ չը թուլացրեց կրօնի արթուն և անողորմ պահապանի խորը հոգեբանութիւնը, նրա նայուածքը, գլուխը բռնկելու ձեւը, շրթունքների կծու հեզնական ժպիտը, նրա լայն քայլուածքը, այդ միշտ կողերին սղմած և մի քիչ ծալած բազուկները—ամենը, ամենը պատկերներ էին, որոնք վկայում են այս արտիստի սուր գիտողութիւնը, հոգեբանական անալիզի անվիճելի կարողութիւնը:

Պ. Յարութիւնեան, որ կատարում էր Դը-Սիլվայի գերը, իր խաղի մէջ միշտ մի բան ունի, որ այնպէս լիշեցնում է հայ պատմական պիեսաների վրուն, արուեստական ինտօնացիան, նրա գերերը երբեմն շատ նման են այս վարդապետի քարոզին, որ իր ասածներին չի հաւատում:

Պ. Տէր-Դաւթեանին թեն-Ակիրի գերը յանձնելը մեր կարծիքով մի կատարեալ սիսալ է, դա թէեւ կարճ, բայց վերին աստիճանի լուրջ և ամբողջը լրացնող մի հետաքրքիր դեր է.

Պ. Տէր-Դաւթեան տաղանդաւոր կօմիկ է, և նրա բեմի վրայ երեւալը բաւական է, որ քրքիջ բարձրանայ, այնպէս էլ եղաւ. նրա «ամենայն ինչ կատարեալ էն» որ իր անողորմ վը ձողականութեամբ սառուցի պէս պիտի նստէր սրաերին և սարսու առաջ բերէր, միայն ծիծաղ յարուցեց, Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

Ինչ որ առանձնապէս ցաւալի էր և զարմանք պատճառեց այդ հասարակութեան դատապարտելի, անտարբեր վերաբերունքն եղաւ գէպի մի այնպիսի չնորհալի գերասան, որպիսին պ. Պետրոսեանն է, միթէ ճշմարիտ անգամ նրա բենեֆիսին հասարակութիւնը պարտական չէր որևէ է թեթեւ նշանով արտայայտել իր յարգանքը հայրենի բեմի երախտաւոր աշխատաւորին, ինչ արժէր ծաղիկներից շինուած մի պսակը. ինչպէս հաշտեցնել այն որոտնդոստ ծափահարութիւնները, որ ստանում է միշտ պ. Պետրոսեան, այս դատապարտելի մոռացութեան հետ...

Նոյեմբերի 18-ին խաղացուած «Օտելլօի» մասին այժմ էլ կ'ասենք մօտաւորապէս այն, ինչ անցեալ անդամ ասել ենք «Արքայ Լիբրի» մասին: Չը նայելով պ. Արէլեանի անպայման լաւխառումբեր, 1902.

զգն շՅակլորի գերում, չը նայելով որ տիրին Մարտունին Դեղդիմնայի դերով աւելի չաւ պնդու որ Աբեղնանին, քան զա-
սեց, այսուամենախին, մնաց նուռ անը կարծիքի, որ ներ-
պիրը առայժմ, հայ բնութ վրայ յաջորդաթիւն ունենալ չի կա-
րող, ամրող թոյլ կը լինի:

Հայկական պրամատիկական խմբի ներկայացու Քերից բա-
ցի՝ մնաք այս ամեն ունեցանք նուռ մի այլ գեղարւունատկան
հաձոց, և դա նարնիւ որ Պ. Ա. Կարա-Մուրզայի, որ նոյն
քերի 3-ին առեց մի համերգ ի յիշտուկ իր հանգուցեալ եղ-
րօր յայտնի երաժշտական Ա. Կարա-Մուրզայի:

Ցուզմանքի մի քաղցր երեկոյ նզաւ այդ համերցի երե-
կուս Գրաւիշ և մարզու սրախն խօսող մի բան կար հանգուցեալ
երաժշտականի եղայրների այս ձևաձարկութեան մէջ, յարցան-
քի նույրական և լուսադոյն ձևն էր ընարաւած—երգը մեռնի
յիշտատկին, ասաւածային երաժշտութիւնը՝ օրօրելու յաւիսե-
նական հանգիստը այն մարզու, որ այնքան ասրիներ անոյն
մելոդիաներով մնաց երազներ պարզեւեց: Միիթարական էր
նկատել, որ բոլոր նրանք, որոնք այսպէս թէ այնպէս իրանց
կապուած էին զգում հանգուցեալ երաժշտականի հետ, եկել էին
իրանց յարգանքը մասացաւելու, եկել էին նրա նույրական յի-
շտատկին արժանի փայլը տալու Եկել էին ազգականները զիս
մնաց կորստի թափիծը ճակատներին, եկել էին նրա երգեցիկ
խմբի անդամները, որոնք այնքան ասրիներ ակնապիշ զիսել
էին նրա ձևաքի հրաշագործ շարժութեանը, եկել էր և հասարա-
կութիւնը, որի սիրան այնքան անզամ թրթռացրել էր հայրենի
գեղարուեստի այն ազնիւ մշակր Ցուզմանքի մի երեկոյ եզաւ,
«Մայր-Արագստ» հետ էլի մի անզամ արցանքներ քամուեցին...
Ա.